

ԳԵՐՇ. Տ. ԱԽԱԳ ԱՐՔ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆԻ
ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

Իրաքի Թեմի Բարեխնամ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Ալագ Արք. Ասատուրեան, որ հիւրաբար կ'այցելէ Արեւմտեան Թեմ, Հինգշաբթի, Յունիս 4ին այցելեց Առաջնորդարան: Ալագ Արքեպսկոսի տեսչականները տուաւ իրաքահայ հոգեւոր եւ ազգային կեանքի եւ ներկայ կացութեան մասին: Իսկ Առաջնորդ Արքեպսկոսի Հայրը ուրախութեամբ հաղորդեց Թեմիս առաւել պայծառութեան, նոր քահանաներու ձեռնադրութեան, նոր Ծուխերու հաստատման, եկեղեցիներու օժման եւ յարկապէս Առաջնորդանիստ Մայր Տաճարի կառուցման եւ յառաջիկայ տարուան Սեպտեմբերին օժման մասին: Ալագ Արքեպսկոսին սիրով ողջունեցին նաեւ Առաջնորդարանի հոգեւորականները եւ բարի գալուստ մաղթեցին իրեն:

Առ ի գիտութիւն, Գերշ. Տ. Ալագ Արք. Ասատուրեան Կիրակի, Յունիս 7ին պիտի Պատարագէ եւ քարոզէ Փաստարինայի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Եկեղեցւոյ մէջ, իսկ Կիրակի, Յունիս 14ին պիտի Պատարագէ եւ քարոզէ Կլէմէնտի Սուրբ Պետրոս Հայց. Եկեղեցւոյ մէջ: Հաւատարմեաներ սիրով կը հրաւիրուին եկեղեցի՝ միասնաբար աղօթելու եւ լսելու բարձրաստիճան հիւր հոգեւորականին պարգամը: